

բարեկամ կը ցուցընէր՝ ոխ կը սպառնայ: Ա՛րեթայ Փիշմիշ Միքայէլին, ճարտարապետ Գրիգորին եւ Իսխէլ Հրէին հետ կը միանայ, եւ չորսն ի միասին կը սկսին համոզիչ խօսքերով զՀալէտ Տիւղեանց դէմ գրգռել:

Միայն ամբաստանութեան յենարան մը եթէ կը գանուէր, այն էր որ հաշուոյն մէջ անհաւասարութիւն կար. սակայն անհաւասարութեան պատճառներն կարծուածէն բոլորովին տարբեր էին, զորոնք հոս մանրամասն նշանակել աւելորդ կը համարինք: Միայն այսչափն ըսենք, որ Գրիգորի քննութեան ատեն հարկ էր հատուցուելու պահանջքն ալ նկատութեան առնուլ, որով հաւասարակշռութիւնը կը պահուէր: Ըստ այսմ՝ հարկ էր միտ դնել որ Տիւղեանք՝ իրենց պաշտօնին իշխանութեամբն, օտար տեղեր ստակ անցուցած էին, եւ փոխադարձ պահանջք ունէին. վերջապէս հարկ էր մտադիր ըլլալ որ աւելորդ դրամներն շահագործելու համար դրսերէն ադամանդ եւ մարգարիտ կը բերուէր: Այս եւ ասոր նման անհամար պատճառներ կրնային զՏիւղեանս արդարացընել. բայց թշնամեաց միտքն այն չէր, այլ գլխապարտ ցուցընել:

Ի հարկէ՛ պատասխանատու այս ամէն իրաց՝ Գրիգոր պիտի ճանչցուէր. բայց գիտնալով որ դատաստանական ճամբով դիւրաւ պիտի կարենային Տիւղեանք ազատիլ՝ պակաս դրամն իսկոյն հատուցանելով, թշնամիք ամէն հնարք փորձեցին, որպէս զե Գրիգորին պատասխանատուութիւնն առաւել եւս դժուարանայ: